

Ի. Ե. ՅԱԿՈՎԼԵՎ, ՅԵԿ. Տ. ՅԱՒ. ԲՈՐՇԱՆ

Ի Ն Չ Պ Ե Ս Պ Ա Ց Ք Ա Ր Ե Լ
Դ Ի Զ Ե Ն Տ Ե Ր Ի Ա Յ Ի Դ Ե Մ
Գ Ց Ո Ւ Ղ Ո Ւ Մ

Ա Ե Վ Ա Կ Ա Խ
Զ Ե Ր Ե Վ Ա Խ


Հ Ր Ա Տ Ա Կ Ա Խ Ո Ւ Թ Ո Ւ Տ

1938

10 APR 2018

Ի.Ն. ՅԱԿՈՎԼԵՎ, ՅԵՎ, Ֆ. ՅՈՒ. ԲԵՐՄԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ
ԳՅՈՒՂՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՅԱԼԻՔՑՈՒՆ
1938

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՆ, ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Ամառ ժամանակ և աշնան սկզբին հաճախ յերեան են գալիս սուր ստամոքսա-աղիքալին հիվանդությունների գեպքեր: Լինում են նաև դիզենաերիայի կամ արնալուծի գեպքեր:

Դիզենաերիան սուր վարակիչ հիվանդություն է, վորն ախտահարում է գլխավորապես հաստ աղիքները: Այդ հիվանդությունը կարող է լայնորեն տարածվել յեթե նրա ըսնկումները վերացնելու համար տեղերում իր ժամանակին յսունդուն միջոցների չդիմեն:

Դիզենաերիայի ըսնկումները կարում են հիվանդացածներին աշխատանքից և բանվորական ձեռքերն զբաղեցնում հիվանդներին խնամելու և նրանց տեղափորելու հոգացողությամբ:

Դրան պետք է ավելացնել և այն, վոր գիշենտերիայից մահանալու գեպքերը բավականին զգալի յեն, մանավանդ յերեխաների մեջ, վոր այդ հիվանդության յուրաքանչյուր գեպք հիվանդացածի ընտանիքին մեծ անհանգստություն և հոգս և պատճառում:



1-445591

Պարզ ե, թե ինչքան կարեոր ե իր ժամանակին կիրարկել բոլոր միջոցները դիզենտերիայի յերեան զալը կանխելու, կամ արդեն յեղած հիվանդությունների բունկումները լիկվիդացիայի յենթարկելու համար:

Դիզենտերիայի նկատմամբ առողջապահական որգանների ձեռք առած միջոցները վճռական հաջողության չեն հասնի, յեթե գյուղինորոշուրգներն ու կոլտնտեսությունների վարչությունները, խորհանտեսությունների և ՄՏԿ-ների գիրեկցիաները, կոլտնտեսավորական հասարակայանության հետ չոգնեն այդ միջուրը կյանքում կիրառելու համար:

Ստամոքսաւաղիքային վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար, դիզենտերիայի դեմ պայքարելու համար հոկայական նշանակություն ունի խորհրդային, տնտեսական և հասարակական կազմակերպությունների մշտական հոգացողությունը բնակավայրերի բարեկարգության ու մաքրության մասին, աշխատավորներին լավորակ խմելու ջուր մատակարարելու մասին, հասարակական սննդի հիմնարկներում և առևտրական ցանցում մաքրություն պահպանելու մասին:

Դիզենտերիայի դեմ մղվող պայքարում փոքր դեր չի խաղում նաև լավ գրված սանիտարական - լուսավորական աշխատանքը՝ ազգաբնության մեջ սանիտարական գիտելիքներ տարածելը և ունակություններ զարգացնելը:

Դիզենտերիան լուրջ հիվանդություն եւ Նաքայքայում է հիվանդի ուժերը, Հիվանդը կորցնում եւ ախորժակը, նա տաքություն և լուծ եւ ունենում:

Լուծը լինում է որական մի քանի անգամ — սկզբում հասարակ, իսկ հետո՝ արյունալի: Դուրս գնալու ցանկությունն ավելի ու ավելի հաճախակի յեղանում, իսկ կղանքը դառնում ել ավելի արյունոտ: Մի քանի որվա ընթացքում հիվանդը սաստիկ հյուծվում եւ հաճախ, ինչպես արդեն ասվել եւ, մահանում եւ:

Պետք է հիշել, վոր դիզենտերիան չափազանց վարակիչ հիվանդություն եւ:

Յուրաքանչյուր վարակիչ հիվանդություն առաջանում է հատուկ մանրագույն կենդան եւ յակից — հիվանդածին միկրոբից:

Դիզենտերիան նույնպես առաջանում է հատուկ միկրոբից: Յերբ այդ միկրօբներն ընկնում են մարդու աղիքների մեջ, այնտեղ սկսում են բազմանալ և վարակված մարդը մի քանի որից հետո հիվանդանում եւ:

Դիզենտերիայի վարակի աղբյուրը հիվանդ
մարդն ե, նրա կղանքը: Այն բոլոր առարկաները,
վորոնց վրա ընկնում ե հիվանդի կղանքը,
կարող են փոխանցել վարակը, ինչպես՝ հողը,
վարի վրա գուրս և նետված կղանքը. ջուրը, վորի
մեջ ընկել ե նա. հիվանդի իրերը, որինակ՝ նրա
սպիտակեղենը, ամանը, հիվանդի կեղտոտած
սննդամթերքները և այլն:

Դիզենտերիայի վարակը բակից տարած-
վում ե մարդկանց ու կենդանիների վոտքների
միջոցով, յեթե բակը կեղտոտաված ե հիվանդի
կղանքով: Վարակը տարածում են նաև ճանճերը՝
ուղղակի հիվանդի կղանքից և իրերից:

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅՈՎ ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ

Յեթե հիվանդին շրջապատողները նախաղ-
գուշական միջոցները չպահպանեն, կարող են
վարակել նրանից: Իսկ յեթե նրանք այդ մի-
ջոցները պահպանեն, կարելի յե կանխել հիվան-
դությունը:

Ստամոքսա - աղիքային խանդարումների
յուրաքանչյուր գեպքի ժամանակ (ցափեր վրա-
վայնում, սրտախառնոց, փսիում, (ուժ) չպետք և
սպասել և բարձիթող անել հիվանդությունը,
պետք ե ամիջապես դիմել բուժողնության:

Լուրջ հիվանդությունն անուշադրության
մատնելու գեպքերում նույն իսկ բուժման լա-
վագույն միջոցները չեն կարող մեծ ոգնություն
ցուց տալ հիվանդին: Այդ պատճառով, այն
հիվանդները, վորոնց հիվանդությունը բարձի-
թող ե արված, հաճախ մեռնում են:

Վոչ մի զեպքում չպետք ե հրաժարվել ար-
նալուծով հիվանդներին հիվանդանոցում տեղա-
վորելուց: Այնտեղ հիվանդին ավելի լավ են
խնամում ու բուժում, քան տանը, Բացի դրա-
նից, հիվանդանոցում ավելի լավ միջոցներով են
վոչնչացնում այն վարակը, վորն արտազատում
և դիզենտերիայով հիվանդը,

Յեթե հիվանդը տանն ե մնացել, ապա նրան
խնամով անձինք պետք ե հետևեն մարմին, ա-
ռանձնապես ձեռքերի, սպիտակեղենի և հագուս-
տի մաքրությանը:

Նույն իսկ հասարակ լուծով հիվանդների
սպիտակեղենը լվանալուց առաջ պետք ե լավ
յեփ տալ մոխրաջրի մեջ, քանի վոր յեփ տալն
սպանում ե վարակին: Անհրաժեշտ ե ջրի մեջ
յեռացնել նաև հիվանդի գործածած ամանները:

Հիվանդին խնամելիս պետք ե հագնել մա-
քուր խալաթ կամ գոզնոց, Այդպիսի խալաթը
կամ գոզնոցը նույնպես պետք ե վարակաղերծել
լվանալուց առաջ:

Քանի դեռ հիվանդը տանն է, նրա կղանքը,
նախ քան արտաքնոցը լցնելը, պետք է անպայ-
ման վարակագերծել: Դրա համար նրա վրա
ընում են 10--տոկոսանոց քլորակը լուծույթ
կամ 5--տոկոսանոց լիդովի լուծույթ այնպես,
որ կղանքը ծածկվի լուծույթով, և թողնում են
 $\frac{1}{2}$ - 2 ժամ: Այն անոթը, զօրի մեջ դուրս ե
գնացել հիվանդը, անհրաժեշտ է միշտ ծածկած
պահել:

Մեռածի ազգականները վերջին հրաժեշտի
ժամանակ յերբեմն համբուրում են դիակը: Այդ
վերին աստիճանի վտանգավոր սովորությունն եւ
Արևալուծից, ինչպես և ուրիշ վարակիչ հիվան-
դություններից մահացածների մաշկի վրա
կարող ե վարակ լինել:

Վտանգավոր ե նաև հոգեհացի սովորու-
թյունը:

Նախ և առաջ, մեռածի ազգականները, թաղ-
ման հետ կապված իրարանցումի մեջ ընկած,
բոլորովին չեն վարակագերծում կամ անփույթ
կերպով են վարակագերծում վարակիչ հիվան-
դությունից մահացածի բնակարանն ու իրերը:

Յերկրորդ՝ հոգեհացի հավաքված մարդիկ
չվարակագերծված կամ վատ վարակագերծված
բնակարանում և մեռածի չվարակագերծված
իրերի մեջ կարող են հեշտությամբ վարակվել:

Վոչ մի դեպքում հոգեհաց չպետք ՚ տալ
այն մահացածների առթիվ, վորոնք մեռել են
այնպիսի հիվանդությունից, ինչպես զիզենտե-
րիան ե, և յերբեք չպետք է գնալ հոգեհացի:

Զպետք է թույլ տալ նաև կրոնական արա-
րողություններ կատարել հիվանդի անկողնի
մոտ:

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ Ա.ՆՉՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻԸ

Մաքրություն պահպանելն ամենապլիսավոր
միջոցներից մեկն ե ընդհանրապես վարակիչ հի-
վանդությունները և մասնավորապես զիզենտե-
րիան կանկելու համար:

Այնտեղ, վորտեղ մարդիկ ընտելացել են
կեղան և հոգ չեն տունում մաքրության մա-
սին, այդպիսի տեղերում լայն ասպարեզ կա
ամեն տեսակի վարակի համար, վորովնեակ կեղ-
տութած առարկաների վրա միշտ ել մեծ քանա-
կությունից միկրոբներ են գտնվում: Այդ
պատճառով յուրաքանչյուր աշխատավոր
իր առորյա կյանքում պետք է մաքրություն
պահպանի:

Ստամոքսա-աղիքային վարակիչ հիվան-
դությունների, այդ թվում նաև զիզենտերիայի

դեմ պայքարելու գործում հսկայական նշանաշ-
կություն ունի սննդի և ջրի մաքրությունը:

Դիղենտերիան կանխերու համար մենք
խորհուրդ ենք տալիս հետեւյալն անել.

1. Ռւտելուց առաջ սապոնով անպայման
լվանալ ձեռքերը, վորպեսզի մաքրվի այն կեղ-
տը, փորի մեջ կարող ե վարակ լինել:

Չմոռանալ օապոնով լվանալ ձեռքերն ամեն
անգամ արտաքնչոց գնալուց հետո:

2. Զիմել հում ջուր փոչ խորը, հեշտ կեղ-
տուտփող ջրհորներից, լճակներից, գետերից և ու-
րիշ բաց ջրամբարներից: Տվյալ վայրում սատ-
մոքաւաղիքային խանգարութեր լինելու դեպ-
քում առաօրակ հում ջուր չգործածել, այլ
միայն յեռացրած ջուր գործածել: Զիմել փոչ մի,
այսպես կոչված «սուբր» ջուր: Եկատված ե, վոր
արնալուծով հիվանդանալու դեպքերը հաճախ
յեկեղեցական տօներից հետո յեն լինում: Այդ
տօների ժամանակ վոմանք խմում են չեռաց-
րած «սուբր» ջուր, վորը շատ հաճախ վարակ-
ված ե լինում զանազան միկրոբներով: Այդ
ձևով, իհարկե, հեշտ ե նաև արնալուծով վարակ-
վել:

3. Կեղտութել խմելու ջրի սկզբնաւոհութերը՝
ջրհորները, աղբյուրները:

Նրանց մոտ լվացք չանել, կեղտութույլերով

ջուր չլերցնել: Զրհորներից ջուր հանելու հա-
մար գործածել հասարակական մաքուր դույլը:

Զրհորները չոպտագործել նրանցում բիդոնով
կաթ սառցնելու համար: Անասնաբակերից բի-
դոնին կպած կեղտը կեղտութում ե ջուրը, վորն
այդպիսով վարակի բուն ե դանում:

4. Ռւտելիքի մեջ չգործածել կեղտութված
բանջարեղենն ու մրգեր: Մաքրել նրանց կպած
հողի, տերևների մասնիկները և այլն: Ռւտելուց
առաջ բանջարեղենն ու մրգերը լավ լվանալ
յեռացրած ջրով:

5. Ռւտելիքը, ջուրը, ինչպես նաև ուտելու
և խմելու համար յեղած տմանները պաշտպա-
նել ճանճերից ու ուտիճներից (տարակ), վո-
րոնք կարող են կեղտութել և վարակել սննդա-
մթերքներն ու ջուրը: Սննդամթերքներն ու ա-
մանները պահել լավ փակվող պահարաններում:
Ամանները մաքուր պահել:

6. Խախ քան կովերի (կամ այծերի) կթելուն
անցնելը՝ խնամքով լվանալ ձեռքերը սապոնով,
ինչպես նաև լվանալ անասունի կուրծքը: Այլա-
պես կեղտութված ձեռքերից կամ կրծքից կարող
ե վարակ ընկնել կաթի մեջ:

7. Յեթե հաստատ համողված չեն, թե կա-
թը միանգամայն մաքուր ե, պետք ե այն ոպտա-
գործել յեռացրած վիճակում:

8. Վոչ մի զեպքում կաթի բիգոնով արտաքնոց չմտնել, ինչպես յերբեմն անում են քաղաքում կաթ ծախող կանաչք; Այդ զեպքում վարակը հեշտությամբ կարող և անցնել կաթին:

9. Մաքուր պահել բնակարանը և նրա շրջապատի տարածությունը: Աղբը, թափթփուկները չպրտել՝ վորտեղ պատահի, կեղտաջուրը շթափել բակի մեջ: Դրա համար գործածել աղբի արկղները կամ լավ փակվող խուփ ունեցող աղբահորերը:

Դեղնաերիայով հաճախ հիվանդանում են այն մարդիկ, վորոնց աղիքները խանգարված են:

Աղիքների խանգարումը հաճախ պատահում ե մարմինը, մասնավորապես վորովախնը խիստ մրսեցնելուց, անչափավոր ուտելուց ու խմելուց, ուտելիք գործածելուց:

Մենք խորհուրդ ենք տալիս.

1. Հանգստանալու համար չպառկել խոնավ գետին, մանավտնդ տաքացած վիճակում:

2. Չիմել շատ սառը ջուր, շատ սառը կվաս կամ ուրիշ խմիչքներ, մանավանդ քրտնած ժամանակ կամ տաք կերակրից հետո:

3. Միանգամբից չափից գուրս շատ չուտել:

4. Ուտելիքի մեջ գործ չածել խակ բանջարեղեն ու մրգեր:

Այն անձինք, վորոնց առողջական վիճակի

հետևանքով բժիշկն առաջարկել ե հատուկ գիետա պահպանել (կերակրի հատուկ տեսակներուտելու հատուկ կարգ և այլն), այդ գիետան խախտելու դեպքում ևս կարող են ստամոքսաւղիքալին խանգարումներ առաջանալ:

Դրա համար մենք խորհուրդ ենք տալիս.

1. Պահպանել բժշկի առաջարկած գիետան:

2. Կերակրի մեջ գործ չածել այն, ինչ արգելել ե բժիշկը:

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅՑԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ստամոքսաւղիքային հիվանդությունների գեմ պայքարելու գործում մեծ դեր պիտի խաղա բանվորական և կոլտնտեսալին հասարակայնությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսության, խորհանակության մեջ և ՄՏԿ-ում պետք ե անմիջապես ընտրել հասարակական սանիտարական լիազորներ: Այդ բանը պետք ե անուան հաշվով, վոր վորոշ հողամասի վրա աշխատող գաշտային բրիգաների համար, կոլտնտեսության մեջ յուրաքանչյուր 20 տնտեսության համար խորհանտեսության մեջ յուրաքանչյուր բանվորական հանրակացարանի համար, յուրաքանչյուր հասարակական ձաշարանի համար ապահոված

Հինի մեկ հասարակական սահմատարական լիազոր:

Ըստրված հասարակական սահմատարական լիազորներին պետք և հանձնարարել խստորեն հսկելու նրանց սպասարկած կետերի մաքրության պահպանմանը և ստամբուրա-աղիքային հիվանդությունները կանխելու անհրաժեշտ միջոցների անցկացմանը:

Այդ միջոցները հետեւյաներն են.

1. Կազմակերպել դաշտերում՝ դաշտային բրիգադներին յեռացրած ջրի անխափան մատակարարում:

2. Ջրհորները նորոգել, սարքել նրանց մոտ հասարակական դույլեր՝ ջուր վերցնելու համար, և անցկացնել ջրամատակարարման աղբյուրների բարեխավման ալլ միջոցառումներ:

3. Արգելել ջրհորների և մարդկանց համար ջուր վերցնելու տեղերին անմիջապես մոտ ջրել անասունները և լվացք անել: Խմելու ջուրը գետից վերցնելու դեպքում՝ լողանալու, լվացք անելու և անասուններին ջրելու համար տեղեր հատկացնել ջուր վերցնելու տեղերից ներքեւ ըստ գետի հոսանքի:

4. Խստագույն մաքրություն՝ պահպանել հաշտաբաններում և շարժական խոհանոցներում:

5. Ցուրաքանչյուր կոլտնտեսականի բարեկում կառուցել տալ արտաքնօց և հետեւ նրա

մաքրությանը: Բացատրել բնակչությանը ստամբուրա-աղիքային հիվանդությունների տարածման դեմ պայքարելու գործում արտաքնօցների կարևոր գերը և արտաքնօցներից կանոնավոր ոգովելու անհրաժեշտությունը:

6. Հետեւել այն մարդկանց առողջական վիճակին, վորոնք զբաղվում են սնունդ պատրաստելով, սնունդը պահելով ու բաժանելով, կազմակերպել այդ աշխատողների ամենամոյա բժշկական քննությունը: Նրանց մոտ ստամբուրա-պիքային խանդաբուժներ յերեան գալու գեպօքում, ուղարկել քննության և ժումանակավորապես (մինչև բժշկի թույլավությունը) հեռացներ սնունդ պատրաստելու, պահելու և բաժանելու աշխատանքից:

7. Հետեւել հասարակական սննդի աշխատողների մարմի, մանավանդ ձեռքերի և վողջ սարքավորման մաքրությանը:

8. Լայնորեն տարածել բնակչության մեջ դիզենտերիայով հիվանդանալու պատճառների և նրա դեմ պայքարելու միջոցների վերաբերյալ գիտելիքներ: Գործի մեջ քաշել բուժաշխատողներին՝ ռայոնական և պատի թերթերում զրուցներ, զառախոսություններ անցկանելու, այդ հարցերի վերաբերյալ հոգվածներ ու դիտողություններ զետեղելու համար: Տարածել սահմատ-

քական—լուսավորական գրականություն:

Կոլտնտեսության մեջ դիզենտերիա հիվանդության յերեալու դեպքում հասարակական ասնիտարական լիազորը պետք ե շրջի բոլոր տնտեսությունները՝ պարզելու, թէ նման հիվանդություններ չկմն արգյոք մյուս տնտեսություններում: Հիվանդներին պետք ե հիվանդանոց ուղարկել:

Այդ շրջագայությունները պետք ե կրկնել վոչ ուշ, քան վեցորյակը 2—3 անգամ, մինչև այս ժամանակ, յեռք տվյալ բնակավայրում կղադարեն հիվանդությունները:

Այն տներում, զորաեղ դիզենտերիայով հիվանդներ են յեղել, առտաքնոցների, աղբահորեցի աղբի վրա և բոլոր կեղտոտված տեղերում պետք ե քլորակիր լցնել:

Այս ե այն աշխատանքի ծրագիրը, վորը պետք ե կատարեն զյուղիսուրհուրդները, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների դիրեկցիաներն ու անիտարական լիազորներն առողջապահական մարմինների հետ միասին, դիզենտերիայի և առամոքսա-աղիքային ուրիշ վարակիչ հիվանդությունների դմ' առ քարելու համար:

Թործելով այս ծրագրի համաձայն ու հենվելով բանվորական և կոլտնտեսային հասարակայնության վրա, զյուղիսուրհուրդներն ու տնտեսա-

կան կազմակերպությունները պետք ե ցույց տան իսկական ստալինյան հոգացողության որինակներ աշխատանքի մարդկանց նկատմամբ, դրա հետ միասին ապահովել զյուղատնտեսական աշխատանքների պլանի կատարումը, ակտիվորեն պահպանելով սոցիալիստական դաշտերի աշխատողների առողջությունը:


Թարգմ'. Ավ. Շաթիլյան

Պատ. խմբ'. Լ. Խարմանդարյան

Հեղվ. խմբ'. Հար. Պետրոսյան

Տեխ. խմբ'. Լ. Ոհանյան

Սրբազրիչ Ա. Արգաքանյան



Գլաւլիտի լիազոր՝ —4048 հրատ. № 4627

Պատվեր 454 Տիրաժ՝ 3000

Թուղթ Տպագր. $1\frac{1}{2}$ մամ.

Մեկ մամ. 19,560 նշան.

Հանձնված ե արտադրության 9 մայիսի 1938 թ-

Ստորագրված տպագրության համար 11 սեպտ.

1938 թ

Պետհրատի Լոպարան, Յերևան, Խենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL1016876

25 ДЕН 1978

9565 16 ч.

- 30 -

/

4455

Как бороться с девиантами на селе

Газ Ары ССР, Ереван 1988 г.